ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ

թիվ 4 նիստում

"30" նոյեմբերի 2022թ.

_______________

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ

# ԱՄԲԻՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| |
|---|
| Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը: |
| 2021-2022 ուս. տարում ամբիոնի աշխատանքային ծավալը կազմել է 6065 ժամ, նախորդ՝ 2020-2021 ուս. տարվա 6286 ժամի համեմատությամբ նվազել է 231 ժամ: Հաշվետու ժամանակաշրջանում նախսորդ տարվա համեմատությամբ Ամբիոնը նոր դասընթացներ չի իրականացրել:<br>Ամբիոնի 2022 թ. աշխատանքային պլանով ծրագրված աշխատանքները 2021-2022 ուս. տարվա երկրորդ և 2022-2023 ուս. տարվա առաջին կիսամյակներում լիովին իրականացվել են՝ ըստ աշխատանքային պլանում սահմանված ժամանակացույցի: |
| Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը: |
| 2022թ. Ամբիոնում իրականացվող դասընթացների ակնկալվող ելքային արդյունքները համապատասխանում են դրանց փաստացի արդյունքներին՝ ըստ Ամբիոնի ՊԴԱ-ի և Համալսարանի ֆակուլտետների դեկանատների դիրքորոշումների: Դասընթացների դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները ըստ անհրաժեշտության թարմացվել և արդիականացվել են (տե՛ս նիստ թիվ 7 - 01.02.2022 թ. և նիստ թիվ 1 - 29.08.2022 թ.), դրանց նկատմամբ վերահսկողությունը Google Classroom-ի հարթակում պարբերաբար (1 շաբաթվա կտրվածքով) իրականացվել է Ամբիոնի վարիչի, Ամբիոնի Google Classroom-ի հարթակի պատասխանատուի, Ամբիոնի որակի պատասխանատուի, ինչպես նաև ՀՊՄՀ որակի վարչության կողմից: Դասավանդման և ուսումնառության մեթոդների վերամշակման, կատարելագործման և դրանց արդյունավետության բարձրացման հարցը պարբերաբար քննարկվել է Ամբիոնում՝ այդ խնդիրների շուրջ ՀՊՄՀ-ում իրականացված լայնածավալ վերապատրաստման պարապմունքների պահանջների դիտանկյունից: Այդ քննարկումների արդյունքներն արտացոլված են Ամբիոնում իրականացվող դասընթացների վերամշակված ուսամնամեթոդական փաթեթներում: |
| Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքների հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները: |
| Հաշվետու տարում ուսանողների գնահատման մեթոդները, չափանիշներն ու մոտեցումները ևս վերանայվել են ըստ ՀՊՄՀ-ում իրականացված վերապատրաստման պարապմունքների պահանջների: Իրականացվել են մի շարք միջոցառումներ ու մեխանիզմներ գնահատման արդյունավետությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև՝ ուսանողների ակադեմիական ազնվությունը ապահովելու ուղղությամբ: Գնահատման համակարգի կատարելագործման ուղղությամբ իրականացվել են մասնավորապես հետևյալ գործողությունները՝<br>● Ամբիոն աշխատանքը խնդրո առարկա ոլորտում հենվել է ՀՊՄՀ ուսումնական և որակի վարչությունների կողմից մշակված ընդհանրական գնահատման համակարգի վրա:<br>● Առարկայական նկարագրերում սահմանվել և ամրագրվել են ստուգման ձևերի գնահատման չափանիշները, ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգումների (խմբային, վերլուծական, թեստային աշխատանքների, գրավոր շարադրանքի, էսսեի և այլն) գնահատականների բաղադրիչները, դրանց ձևավորման սկզբունքներն ու մեխանիզմները, գնահատման յուրաքանչյուր բաղադրիչի տոկոսային արտահայտությունը ընդհանուր գնահատականի կառուցվածքում:<br>● Գնահատման համակարգում կարևորվում է ուսանողի վերլուծական, ինքնուրույն, ստեղծագործական, աշխատանքի բաղադրիչը, որը նպատակաուղղված է ուսանողի հետազոտական քննադատական-վերլուծական, ինչպես նաև՝ նորարական մտածողության խթանմանը: Այդ նպատակով միջանկյալ ստուգումներն ու ընթացիկ ստուգումները հիմնականում իրականացվել են էսսեների, վերլուծական աշխատանքների, խմբային (թիմային) աշխատանքների, թեստերի միջոցով, իսկ որոշ դասընթացների դեպքում՝ դրանք նաև զուգակցվել են ավանդական գրավոր շարադրանքների հետ:<br>● Գնահատման համակարգում կարևորվել են նաև ուսանողների ինչպես լսարանում դրսևորած ակտիվության, այնպես էլ՝ էլեկտրոնային ակտիվության (Google Classroom |

| |
|---|
| հարթակում ժամանակին գրանցվելու, դասընթացի էջում տեղ գտած առաջադրանքները ժամանակին կատարելու, դասախոսի կողմից ֆորումներում առաջադրված քննարկումներին ժամանակին արձագանքելու) ցուցանիշները:<br><br>Գնահատման համակարգի թվարկված յուրաքանչյուր բաղադրիչն իրականացնելիս ՊԴԱ-ն գործնականում անդրադարձել է ստուգման յուրաքանչյուր կոնկրետ ձևի առանձնահատկություններից բխող պահանջների իրականացման եղանակներին՝ ըստ առարկայական նկարագրերում սահմանված ելքային արդյունքների, մասնավորապես՝<br><br>● տեսական հարցերի ներկայացման ամբողջականությանը,<br>● ձևակերպումների ստույգությունը,<br>● շարադրման տրամաբանությունը,<br>● տեսական գիտելիքը ձևայնացնող առաջադրանք-վարժանքների ճիշտ իրականացումը (մասնավորապես՝ “Տրամաբանություն” և “Փաստարկման տեսություն” առարկաների դեպքում),<br>● եզրահանգումների ու արժևորումների ինքնուրույնությունը,<br>● թեմայի հիմնավորումը,<br>● գրականության հնարավորինս ամբողջական օգտագործումը և այլն:<br><br>Մատնանշված պահանջների համար յուրաքանչյուր կոնկրետ առարկայի դեպքում, կախված տվյալ առարկայի առանձնահատկություններից, սահմանվել են գնահատման կոնկրետ որոշակի տոկոսաչափեր:<br><br>Ամբիոնը մշապես իր դիտարկման կենտրոնում է պահում ուսանողների Ինքնուրույն աշխատանք կատարելու կարողություն և նրանց շրջանակներում ակադեմիական ազնվության ապահովման և գրագողության բացառման հիմնախնդիրները և մշակում է գրագողության դեմ պայքարի բազմաբնույթ մեխանիզմներ:<br><br>Մասնավորապես՝ հաշվետու տարում ակադեմիական ազնվությունը ապահովելու գործում Ամբիոնը շարունակել է վերջին տարիներին յուրացրած մոտեցումը՝ ստուգման ձևերն իրականացնելիս սահմանել այնպիսի պահանջներ և առաջադրել հետազոտական աշխատանքի այնպիսի բովանդակային և տեխնիկական քայլեր, որոնց «մեխանիկական» կատարումը կապահովի ուսանողի ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքը:<br><br>Հետազոտական (Վերլուծական, էսսեի) աշխատանքի իրականացման քայլերը առաջադրվել են Google Classroom-ի հարթակում, ըստ անհրաժեշտության տեղադրվել են նաև ըստ այդ քայլերի իրականացված հետազոտական աշխատանքի տիպօրինակներ: |
| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: |
| 2022 թ.-ի առաջին նիստում (ՆԻՍ ԹԻՎ 6, 25.01.2022 թ.) տեղի է ունեցել ամբիոնում ղեկավարվող կուրսային աշխատանքի պաշտպանություն, քննարկվել և հաստատվել է կուրսային աշխատանքը: Ամբիոնի նիստերում քննարկվել և հաստատվել են առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները՝ 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակում իրականացվող դասընթացների (ՆԻՍ ԹԻՎ 7, 01.02.2022 թ.) և 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակում իրականացվող դասընթացների (ՆԻՍ ԹԻՎ 1, 29.08.2022 թ.):<br>Google Classroom հարթակում աշխատանքների կազմակերպման, մշտադիտարկումների, անհրաժեշտ թարմացումների և այլ հարցերի շուրջ քննարկումներ են իրականացվել Ամբիոնի հետևյալ նիստերում՝ ՆԻՍ ԹԻՎ 7 - 01.02.2022 թ.; ՆԻՍ ԹԻՎ 8 - 02.03.2022 թ.; ՆԻՍ ԹԻՎ 1 - 29.08.2022 թ.; ՆԻՍ ԹԻՎ 2 - 12.09.2022 թ.; ՆԻՍ ԹԻՎ 3 - 7.10.2022 թ.; ՆԻՍ ԹԻՎ 4 - 30.11.2022 թ.: Քննարկումների արդյունքում կայացվել են հետևյալ որոշումներ.<br>1. Հետևել Google Classroom հարթակում դասընթացների բոլոր էջերում անհրաժեշտ նյութերի ապահովմանը:<br>2. Ամրագրել Google Classroom հարթակում ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող դասընթացների էջերի անհրաժեշտ թարմացումները: |

3. Հետևել սահմանված ժամկետներում Google Classroom հարթակում դասընթացների բոլոր էջերում անհրաժեշտ նյութերի ապահովմանը:
4. Ամրագրել Google Classroom հարթակում ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող դասընթացների էջերի անհրաժեշտ թարմացումները:
5. Ընդունել ի գիտություն և հետևել Google Classroom հարթակում անհրաժեշտ նյութերի առկայությանը:
6. Հնարավորինս սեղմ ժամկետներում վերացնել Google Classroom հարթակի դասընթացների էջերում առկա բացթողումները:

Ամբիոնի նիստերում դիտարկվել, քննարկվել և հաստատվել են միջանկյալ ստուգումների, ամփոփիչ քննությունների, ասպիրանտական դասընթացների հարցաշարերը և տոմսերը (ՆԻՏՏ Թ/Վ 7 - 01.02.2022 թ.; ՆԻՏՏ Թ/Վ 9 - 01.04.2022 թ., ՆԻՏՏ Թ/Վ 11 - 23.05.2022 թ.; ՆԻՏՏ Թ/Վ 2- 12.09.2022 թ.; ՆԻՏՏ Թ/Վ 3 - 7.10.2022 թ.):

Ամբիոնի թիվ 10 նիստի (21.04.2022 թ.) շրջանակներում իրականացվել է 2021-2022 ուս. տարվա առկա բակալավրիատի Հասարակագիտություն մասնագիտության ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը: Արդյունքում քննարկված ավարտական աշխատանքները երաշխավորել են պաշտպանության և նշանակվել են աշխատանքների գրախոսները: Նույն նիստում քնարկվել է նաև Ամբիոնի պրոֆեսոր, փ.գ.դ. Ռոբերտ Զալիբեկի Ջիջյանի «СДЕЛАТЬ ОТКРЫТИЕ – ЭТО ПРОСТО (Основы логики и методологии научных открытий)» խորագրով գիրքը և որոշում է կայացվել գիրքը հրատարակության երաշխավորելու նպատակով այն ներկայացնել Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը:

Ամբիոնի թիվ 1 նիստում (29.08.2022 թ.) ներկայացվել և քնարկվել են 2021-2022 ուս. տարվա ՊԴԱ անհատական աշխատանքների հաշվետվությունները և 2022-2023 ուս. տարվա ՊԴԱ անհատական աշխատանքների պլանները: Նիստում քննարկվել ու հաստատվել են նաև 2022-2023 ուս. տարվա ամբիոնի նիստերի տարեկան (ըստ կիսամյակների) պլանն ու ամբիոնի աշխատանքային պլանը:

Ամբիոնի թիվ 2 նիստում (12.09.2022 թ.) իրականցվել է Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Հասարակագիտություն մասնագիտության մագիստրոսական ատենախոսության թեմաների քննարկում և հաստատում:

Թիվ 4 նիստում (30.11.2022 թ.) ներկայացվել, քննարկվել և հաստատվել են ամբիոնի և WISDOM գիտական ժողովածուի 2022 թվականի տարեկան հաշվետվությանները:

| Պրոֆեսորադասախոսական կազմը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանայք | Դոկտոր | Պրոֆեսոր | Գիտ.թեկն. | Դոցենտ | Ասիստենտ | Դասախոս | Ընդ-նը |
| Հաստիքային | 3 | 2 | 1 | 2 | 2 | 1 | 1 | **5** |
| Համատեղող | 2 | 2 | 1 | 3 | 4 | - | - | **5** |
| Ժամավճարային | - | - | - | - | - | - | - | **-** |
| Ընդամենը | **5** | **4** | **2** | **5** | **6** | **1** | **1** | **10** |

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում: |
|---|
| Հաշվետու տարում Ամբիոնում իրականացվել են թվով 39 դասընթացներ (130 դասընթաց Google Classroom հարթակում) համալսարանի բոլոր ֆակուլտետներում, առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատում և մագիստրատուրայում, ինչպես նաև ասպիրանտուրայում, որոնց առարկայական նկարագրերը և ուսումնամեթոդական փաթեթները հանգամանորեն քննարկվել, վերանայվել, հաստատվել և վերահաստատվել են Ամբիոնի թիվ 7 (01.02.2022 թ.) և |

թիվ 1 (29.08.2022 թ.) նիստերում: Դասընթացներն իրականացվել են ինտերակտիվ մեթոդներով առցանց, առերես կամ զուգացված տարբերակներով: Նախորդ տարում Ամբիոնում իրականացվել էր թվով 43 դասընթացներ, 2022-ին որոշ ֆակուլտետներում նվազել են ընտրովի դասընթացները:

**2021-2022 ուս. տարի, 2-րդ կիսամյակ**
**Բակալավրիատ՝**
1. Տրամաբանություն
2. Փիլիսոփայության պատմություն
3. Փիլիսոփայություն
4. Գեղագիտություն
5. Սոցիալական փիլիսոփայություն
6. Հայ փիլիսոփայության պատմություն
7. Մշակույթի փիլիսոփայություն
8. Մշակութային մարդաբանություն
9. Ընտր/դաս (Կրոնի տեսություն և պատմություն)
10. Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն)

**Մագիստրատուրա՝**
11. Ընտր/դաս (18-20-րդ դարերի փիլիսոփայական այլընտրանքները)
12. Ընտր/դաս (Գիտական հեղափոխությունները ճշգրիտ գիտություններում)
13. Ընտր/դաս (Փաստարկման տեսություն)
14. Ընտր/դաս (Գիտական աշխատանքի տեխնոլոգիա)
15. Ընտր/դաս (Բնական լեզու հասկացում,արհեստական ինտելեկտ)
16. Լեզվի փիլիսոփայություն
17. Տրամաբանություն
18. Կրթության փիլիսոփայություն
19. Հաղորդակցման տեխնոլոգիաներ
20. Հերմենևտիկա

**2022-2023 ուս. տարի, 1-ին կիսամյակ**
**Բակալավրիատ՝**
21. Փիլիսոփայության ներածություն
22. Մշակութային մարդաբանություն
23. Փիլիսոփայություն
24. Էթիկա և էթիկետ
25. Փիլիսոփայություն (մ) (ՊՀ-4, Հասարակագիտություն)
26. Տրամաբանություն
27. Ընտր./դաս. (Տրամաբանություն)
28. Կրոնի տեսություն և պատմություն
29. Ընտր/դաս (Էքզիստենցիալիզմը հայ գրականության մեջ)
30. Ընտր/դաս (Կրոնի տեսություն և պատմություն)
31. Ընտր/դաս (Գիտական աշխատանքի տեխնոլոգիա)
32. Փաստարկում և ճարտասանություն
33. Ընտր/դաս (Մշակույթի փիլիսոփայություն)

**Մագիստրատուրա՝**
34. Բիոէթիկայի հիմունքներ
35. Պատմության փիլիսոփայություն
36. Լեզվի փիլիսոփայություն
37. Ընտր/դաս (18-20-րդ դարերի փիլիսոփայական այլընտրանքները)
38. Ընտր/դաս (Փաստարկման տեսություն)

**Ասպիրանտուրա**
Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն

Հաշվետու տարում Ամբիոնում հրատարակվել է 3 դասագիրք և 4 ուսումնամեթոդական ձեռարկ:

| |
|---|
| |

| Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դասագրքեր | | | Ուսումնական ձեռնարկներ | | |
| ՀՊՄՀ դասիչով | ՀՀ ԿԳՆ դասիչով | Այլ դասիչներով | ՀՊՄՀ դասիչով | ՀՀ ԿԳՆ դասիչով | Այլ դասիչներով |
| | | **3** | | | **4** |

| Ամբիոնի կոնֆերանսների և սեմինարների քանակը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջազգային | | Հանրապետական | | Քաղաքային | | Համալսարանական | | Ամբիոնային | |
| կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. |
| Միջազգային գիտագործնական կոնֆերանս, Սանկտ Պետերբուրգ, Պ.Ֆ. Լեսգաֆտի անվան համալսարան, 27 մայիսի 2022 թ. | | | | | | | | | |

| Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ | | | |
|---|---|---|---|
| Անվանում | Ժամկետ | Ֆինանսավորման ծավալ | Ամբիոնի մասնակից-անդամների քանակ |
| ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ (Բազային ֆինանսավորում, ԳՊԿ կողմից) | 2016-2022 թթ. | 3 397 737 (երեք միլիոն երեք հարյուր ինսունյոթ հազար յոթ հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ | 2 |
| Տրամաբանության, փաստարկման և ճարտասանության բաղադրիչների ներդրում և զարգացում բուհական կրթական ծրագրերում (ԵՊՀ դրամաշնորհ) | 2022, 2023 թթ. | 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամ | 2 |

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| Ամբիոնի հետազոտական աշխատանքն արտացոլվում է ստորև ներկայացված փոխկապակցված ձևերում |
|---|

| |
|---|
| Իչպես և նախորդ տարում՝<br>ա) հետազոտական աշխատանք դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, |
| բ) Ամբիոնի ՊԴԱ անցկացրած գիտաժողովները, տեսական սեմինարներն ու դասախոսությունները, |
| գ) (ա) և (բ) կետերում նշված հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները: |

Ա. Պրոֆեսորադասախոսական

| Ամբիոնի գիտական ուղղությունները /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/ | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղղության անվանումը | Աշխ-ի տեսակը | Ֆին.աղբյուր | Ֆին.ծավալ | Կատարողներ |
| Փոխակերպվող հասարակության հիմնախնդիրները. մեթոդաբանական և մեթոդական տեսանկյուններ | Հիմնարար | ՀՀ ԳՊԿ | 3 397 737 (երեք միլիոն երեք հարյուր ինսունյոթ հազար յոթ հարյուր երեսունյոթ) | Հովհաննիսյան Հասմիկ Հովհաննեսի, Հովհաննիսյան Հովհաննես Օնիկի |
| Փոխակերպական տրամաբանություն | Կատարողների հետաքրքրությունների ոլորտը | չկա | | Զիջյան Ռոբերտ (փ.գ.դ., պրոֆեսոր) |
| Փաստարկման և միջմշակութային հաղորդակցման ժամանակակից հիմնահարցերը | Կիրառական | չկա | | Հասմիկ Հովհաննիսյան (փ.գ.դ., դոցենտ), Հովհաննես Հովհաննիսյան (փ.գ.թ., դոցենտ), Սաթենիկ Կուզանյան (ամբիոնի հայցորդ), Մարինե Շահբազյան (փ.գ.թ., ասիստենտ) |
| Քաղաքացիական հասարակության հաստատությունները (ինստիտուտները) փոխակերպվող հասարակության համատեքստում | Կիրառական | չկա | | Հովհաննես Հովհաննիսյան (փ.գ.թ., դոցենտ), Հասմիկ Հովհաննիսյան (փ.գ.դ., դոցենտ) Քաջիկ Օհանյան (փ.գ.դ., պրոֆեսոր) Արուսյակ Ղարիբյան (փ.գ.թ., դոցենտ) |
| Ինքնուրույն, վերլուծական, քննադատական մտածողություն | Կիրառական | չկա | | Զիջյան Ռոբերտ (փ.գ.դ., պրոֆեսոր) Հասմիկ Հովհաննիսյան (փ.գ.դ., դոցենտ) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Հովհաննես Հովհաննիսյան (փ.գ.թ., դոցենտ), Քաջիկ Օհանյան (փ.գ.դ., պրոֆեսոր) |
| Հերմենևտիկա, մշակութային մարդաբանություն, պատմության փիլիսոփայություն | Կիրառակա ն | չկա | | Մոսինյան Դավիթ (փ.գ.թ., դոցենտ), Անդրանիկ Ստեփանյան (փ.գ.թ., դոցենտ) |
| Բիոէթիկա | Կիրառակա ն | չկա | | Նելլի Պետրոսյան (դասախոս) Սուսաննա Դավթյան (փ.գ.դ., դոցենտ) Մարինե Ծահբազյան (փ.գ.թ., ասիստենտ) |
| Կրոնի տեսություն և պատմություն | Կիրառակա ն | չկա | | Անդրանիկ Ստեփանյան (փ.գ.թ., դոցենտ), Նելլի Պետրոսյան (դասախոս) |

| ՊԴԱ-ի կողմից հրատարակված դասագրքեր և ձեռնարկներ | | | |
|---|---|---|---|
| Հեղինակ Ա.Ա.Հ. | Դասագրքի / ձեռնարկի անվանումը | Հր.անուն և տարի | Ծավալ |
| Оганян Каджик Мартиросович | Философия человека. Учебник для академического бакалавриата. Рекомендовано УМО ВО в качестве учебника для студентов ВУЗа, 6-е изд. | Юрайт | 157 |
| Оганян Каджик Мартиросович | Социальные технологии. Рекомендовано УМО ВО в качестве учебника для студентов ВУЗа: Учебник и практикум 6-е изд., испр. и доп. | Юрайт | 252 |
| Оганян Каджик Мартиросович | Методология и методы социологического исследования. Рекомендовано УМО ВО в качестве учебника для студентов ВУЗа: Учебник. 6-е изд., испр. и доп. | Юрайт | 299 |
| Оганян Каджик Мартиросович | Общая социология: Учебное пособие с грифом УМО ВУЗов по классическому университетскому образованию, 9-е изд. | ИНФРА-М | 236 |
| Оганян Каджик Мартиросович | Методика преподавания социологии. Учебное пособие для ВУЗов. 6-е изд. | Юрайт | 202 |
| Оганян Каджик Мартиросович | Философия и методология социальных наук. Рекомендовано УМО ВО в качестве учебного пособия для студентов ВУЗа: Учебное пособие для бакалавриата и магистратуры. 5-е изд., испр. и доп. | Юрайт | 167 |

| | | | |
|---|---|---|---|
| Оганян Каджик Мартиросович | Социология. Рекомендовано УМО ВО в качестве учебного пособия для студентов СПО: Учебное пособие. 5-е изд., испр. и доп. | Юрайт | 154 |

| Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ | | |
|---|---|---|
| Հեղինակ Ա.Ա.Հ. | Հոդվածի, զեկույցի անվանումը | Ծավալ |
| Պետրոսյան Նելլի Լևոնի | Կրթության և դաստիարակության նշանակությունը Գրիգոր Լուսավորչի «Հաճախապատում ճառերում» | 97-102 |
| Hovhannisyan Hasmik, Djidjian Robert | AI Supported System for Developing Critical Thinking | 10 |
| Հովհաննիսյան Հասմիկ, Ջիջյան Ռոբերտ | Նորարարական մտածողության զարգացումը՝ արդի անկավարժության անհետաձգելի խնդիր | 10 |
| Ջիջյան Ռոբերտ, Գևորգյան Մարիամ | Ստեղծագործական մտածողության պարադոքսներ | 10 |
| Оганян Каджик М., Оганян К.К., Хитарян Д.С., Степанян Л. С., Нуишкян А.Р. | Методологический анализ формирования социально-гуманитарных технологий в управлении человеческими ресурсами | 55-67 |
| Оганисян Асмик О., Ованнисян Ованес О. | Проблема толерантности в современных психологических теориях | 80-84 |
| Оганян Каджик М., Оганян К.К. | Особенности цифровизации глобального общества | 84-89 |
| Դավիթ Մոսինյան | Վեպի ավարտը. կյանքի և պատումի սահմանին | 182-191 |
| Ованнисян Ованес, Оганисян Асмик, Оганян Каджик | Особенности восприятия феномена геноцида армян в общественном мнении жителей Еревана в контексте 100-летия со дня трагедии (на основе анализа результатов социологических опросов) | 9 |
| Davit KHITARYAN, Lusine STEPANYAN, Kadzhik OGANYAN, Vladimir OGORODNIKOV, Karina OGANYAN | Social Synergetics: Synergetic Historicism and Humanism | 11 |
| Оганян Каджик М., Оганян К.К. | МЕТОДОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ФОРМИРОВАНИЯ СОЦИАЛЬНО-ГУМАНИТАРНЫХ ТЕХНОЛОГИЙ В УПРАВЛЕНИИ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ | |
| Оганян Каджик М., Оганян К.К. | Особенности цифровизации глобального общества | |
| Оганян Каджик М., Оганян К.К. | Здоровье как ценность | |
| Оганян Каджик М., Оганян К.К. | НЕКОТОРЫЕ ХАРАКТЕРИСТИКИ РОССИЙСКО-КИТАЙСКОГО СОТРУДНИЧЕСТВА В СФЕРЕ ОБРАЗОВАНИЯ В УСЛОВИЯХ ПОСТГЛОБАЛИЗАЦИИ И ЦИФРОВИЗАЦИИ | |
| Оганян Каджик М., Оганян К.К. | ИССЛЕДОВАНИЕ СИНЕРГЕТИЧЕСКОЙ ФИЛОСОФИИ ЧЕЛОВЕКА | |
| Оганян Каджик М., Оганян К.К. | СОЦИАЛЬНЫЕ ТЕХНОЛОГИИ ФОРМИРОВАНИЯ ЛИДЕРСКИХ КАЧЕСТВ СПОРСТМЕНА | |
| Оганян Каджик М. | ИССЛЕДОВАНИЕ НЕКОТОРЫХ ФАКТОРОВ ПРЕЖДЕВРЕМЕННОГО СТАРЕНИЯ И ДОЛГОЖИТЕЛЬСТВА В САНКТ-ПЕТЕРБУРГЕ | |

| Ամբիոնի գիտական սեմինարներ | |
|---|---|
| Սեմինարի անվանումը | Անցկացման վայրը, օրը |
| Սեմինարավար՝ փ.գ.թ., դոցենտ Հովհաննես Հովհաննիսյան | |

| <Քաղաքացիական հասարակության հաստատությունները (ինստիտուտները) փոխակերպվող հասարակության համատեքստում> գիտական ուղղության գործունեության շրջանակներում | |
|---|---|
| 1. «Փաստարկում և հռետորաբանություն» | ՀՀ արդարադատության ակադեմիայի ունկնդիրների համար: Փետրվար-մարտ, 2022թ.: |
| 2. «Փաստարկում և հռետորաբանություն» | ՀՀ Փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար: Հունվար-փետրվար, մայիս-հունիս, նոյեմբեր, 2022թ.: |
| 3. «Քաղաքացիական հասարակության հաստատությունների զարգացման առանձնահատկությունները և արիմիութենական շարժումը Հայաստանում» | «Արիմիությունների առաջնորդության դպրոց» ծրագրի շրջանակներում: «Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ» հայաստանյան մասնաճյուղ: 06.05.2022թ.: |
| 4. «Փաստարկման և ճարտասանության հմտություններ» | ՀՀ արտաքին գործերի նախարարության Դիվանագիտական դպրոց, 25.02.2022թ., 18.07.2022թ., 06.10.2022թ.: |
| 5.«Բանավեճի, փաստարկման և ճարտասանության հմտություններ» | «Սոսե կանանց հիմնահարցեր» ՀԿ-ի կողմից նախաձեռնած «Քաղաքական դպրոց երիտասարդների եվ կանանց համար» ծրագրի մասնակիցների համար: 12.07.2022թ., Էջմիածին: |
| 6. «Հաղորդակցման և հանրային խոսքի հմտություններ» | «Տնտեսական զարգացման, կառավարման և ձեռնարկությունների աճի ծրագիրի» շրջանակներում: USAID Armenia, ապրիլ-հուլիս, 2022թ.: |
| 7.«Հաղորդակցման հմտություններ» | ՀՀ պետական և քաղծառայողների վերպատրաստման և որակավորման բարձրացման ծրագրի շրջանաներում: ՀՀ կառավարման ակադեմիա, 06.06.2022թ.: |
| 8. "Բանավեճի և ճարտասանության հմտություններ" | Եվրոպայի խորհրդի Քաղաքական դասընթացների երևանյան դպրոց, 23-ը հոկտեմբերի, 2022թ, Ծաղկաձոր: |
| 9. «Բանավեճի և ճարտասանության հմտություններ» | «Միջազգային հանրապետական ինստիտուտ» (International Republican Institute) ՀՀ մասնաճյուղ, USAID, հոկտեմբեր- դեկտեմբեր, 2022թ., Երևան: |

| | |
|---|---|
| 10. <Փոխակերպական տրամաբանություն> գիտական ուղղության գործունեության շրջանակներում<br><br>Զեկուցող՝ փ.գ.դ., պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյան | ՀՊՄՀ, Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>22.02.2022թ |
| 11. <Փոխակերպվող հասարակության հիմնախնդիրները. մեթոդաբանական և մեթոդական տեսանկյուններ> գիտական ուղղության գործունեության շրջանակներում<br><br>Զեկուցող՝ փ.գ.դ., դոցենտ Հասմիկ Հովհաննիսյան | ՀՊՄՀ, Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>16.03.2022թ |
| 12. <Փաստարկման և միջմշակութային հաղորդակցման ժամանակակից հիմնահարցերը> գիտական ուղղության գործունեության շրջանակներում<br><br>Զեկուցող՝ Սաթենիկ Կուզանյան | ՀՊՄՀ, Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>20.04.2022թ |
| 13. <Ինքնուրույն, վերլուծական, քննադատական մտածողություն մտածողություն> գիտական ուղղության գործունեության շրջանակներում<br><br>Զեկուցող՝ փ.գ.դ., պրոֆեսոր Քաջիկ Օհանյան (առցանց) | ՀՊՄՀ, Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>25.05.2022թ |
| 14.<Բիոէթիկա> գիտական ուղղության գործունեության շրջանակներում<br><br>Զեկուցող՝ փ.գ.դ., դոցենտ Սուսաննա Դավթյան | ՀՊՄՀ, Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>6.06.2022թ |
| 15. <Պատմության փիլիսոփայություն> գիտական ուղղության գործունեության շրջանակներում<br><br>Զեկուցող՝ փ.գ.թ., դոցենտ Մոսինյան Դավիթ | ՀՊՄՀ, Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>11.10.2022թ |
| 16. <Մշակութային մարդաբանություն> գիտական ուղղության գործունեության շրջանակներում<br><br>Զեկուցող՝ փ.գ.թ., դոցենտ Անդրանիկ Ստեփանյան | ՀՊՄՀ, Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>15.11.2022թ |
| 17.<Կրոնի տեսություն և պատմություն> գիտական ուղղության գործունեության շրջանակներում<br><br>Զեկուցող՝ դասախոս Նելլի Պետրոսյան | ՀՊՄՀ, Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն<br><br>6.12.2022 |

| Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ | | | |
|---|---|---|---|
| Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք | ՈԲ-ի անցկացման հաստատություն | ՈԲ ժամկետները | Արդյունք |
| Օհանյան Քաջիկ Մարտիրոսի / 0,25 | *АНО ДПО «Санкт-Петербургск* | 01-29 ապրիլի, 2022 թ., 144 ժամ | **Удостоверение о повышение** |

| | | | |
|---|---|---|---|
| դրույք, փ.գ.դ., պրոֆեսոր | *ий Межотраслевой Институт Повышения Квалификации»* по программе «**Психолого-педагогическая деятельность преподавателя высшего учебного заведения**» | | **квалификации** -*781201189584. Регистрационный номер: ПК/22/04/000144.* |
| Օհանյան Քաջիկ Մարտիրոսի / 0,25 դրույք, փ.գ.դ., պրոֆեսոր | **ФГБОУ ВО НГУ им. П.Ф. Лесгафта по дополнительной профессиональной программе** «Особенности организации учебного процесса для обучающихся с ограниченными возможностями здоровья, включая инвалидов» | հունիս 2022 թ. | **Удостоверение о повышение квалификации -782416802681.** |
| Պետրոսյան Նելլի Լևոնի / 0,5 դրույք, դասախոս | Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան Intermediate English Language Course | 02.02.2022-23.03.2022 (60 ժամ) | Certificate of Completion |
| Հովհաննիսյան Համիկ Հովհաննեսի, Ամբիոնի վ. գ/դ, դոցենտ; Ջիջյան Ռոբերտ Զալիբեկի, գ/դ, պրոֆեսոր; Օհանյան Քաջիկ Մարտիրոսի, գ/դ, պրոֆեսորի պ.; Դավթյան Սուսաննա, գ/դ, դոցենտ; Հովհաննիսյան Հովհաննես Օնիկի գ/թ, դոցենտ; Մոսինյան Դավիթ Ռոմիկի, գ/թ, դոցենտ; Ստեփանյան Նղրանիկ Արամայիսի, գ/թ, դոցենտ; Ծահբազյան Մարինե Կարապետի, գ/թ, դասախոս; Ղարիբյան Արուսյակ, գ/թ, դասախոս; Պետրոսյան Նելլի Լևոնի, դասախոս | Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան **<ՊԴԱ կազմի համար ՄԿԾ-ների, առարկայական նկարագրերի որակի բարձրացմանն ուղված մանկավարժամեթոդական վերապատրաստման դասընթացներ>** | 04.07.2022թ 06.07.2022թ (4 ժամ) | Վերապատրաստված դասախոսներ |

Բ. Ուսանողական

| Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ | | | |
|---|---|---|---|
| «Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» խմբակ | 2017 թ.-ից մինչ օրս | Պատասխանատուներ՝ Ամբիոնի ՊԴԱ և ավագ մասնագետ: Անդամներ՝ Բուհի առկա և հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ, ասպիրանտներ, հայցորդներ | Տեսական սեմինարներ, ուսանողական զեկույցներ, քննարկումներ, կլոր սեղաններ |

| Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ | | |
|---|---|---|
| Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/ | Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ | Ուսանողական զեկույց / քանակ |
| Միջազգային | ՀՊՄՀ Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնը ՌԴ Սանկտ պետերբուրգի Պ. Ֆ. Լեսգաֆի անվան Ֆիզիկական կուլտուրայի սպրոտի և առողջության ազգային պետական համալսարանի Սոցիալական և հումանիտար գիտությունների ամբիոնի հետ համատեղ Սանկտ Պետերբուրգում երրոդ տարին անընդմեջ կազմակերպում է միջազգային գիտաժողով, որին բացի ամբիոնի անդամներից զեկույցներով հանդես են գալիս նաև ՀՊՄՀ մագիստրոսներ և ասպիրանտներ: 2023 թ.-ին ևս ծրագրվում է կազմակերպել հերթական գիտաժողովը, որի ծրագիրը և թեմատիկան նախապես ներկայացվել է ՀՊՄՀ ՈՒԳԸ-ին՝ առաջարկելով զեկուցումներով հանդես գալ գիտաժողովին: (Социально-гуманитарные технологии в управлении человеческими ресурсами в сфере физической культуры, спорта и здоровья. Потенциал спорта в системе международных отношений. Международная научно-практическая конференция, посвященной 125-летию НГУ им. П. Ф. Лесгафта, 27 мая 2022 г, Санкт-Петербург, РФ.) | 2 |

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| |
|---|
| Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում: |
| Ամբիոնի միջազգային գործունեությունը |
| Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում: |
| Տեղական բուհերի (Հայաստանի ամերիկյան համալսարան, Հայաստանի ֆրանսիական համալսարան, Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան, ԵՊՀ, ԵՊԲՀ) և ՀՀ այլ կառույցների (ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ, ՀՀ ԲՈԿ, ՀՀ ԳԿ) հետ համագործակցությունը իրականացվում է ամենից առաջ ամբիոնում համատեղող դասախոսների ներգրավվածությամբ, ինչպես նաև՝ WISDOM հանդեսի շրջանակներում այդ կազմակերպությունների ներկայացուցիչների՝ որպես հեղինակներ և գրախոսներ հանդես գալով, ինչպես նաև համալսարանում գործող 062 մասնագիտական խորհրդին անդամակցությամբ կամ խորհրդի շրջանակներում իրականացվող այլ բնույթի գործունեությամբ:<br>ՀՀ Գիտության կոմիտեի հետ համագործակցությունն իրականացվում, է ամբիոնի <Փոխակերպվող հասարակության հիմնախնդիրները. մեթոդաբանական և մեթոդական տեսանկյուններ> խորագրով բազային թեմայի շրջանակներում: |

Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների և կառույցների հետ
Ամբիոնի միջազգային գործունեությունը առանձնահատուկ ընթացք է ստանում ամբիոնի WISDOM միջազգային գիտական հանդեսի շրջանակներում, ինչպես ամսագրի խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված միջազգային համալսարանները ներկայացնող փիլիսոփաների, այնպես էլ տարբեր երկրների տարբեր համալսարանները ներկայացնող հեղինակների հետ համագործակցության արդյունքում:

| Բուհ/ամբիոն /երկիր | Համագործակցության ձևը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ուսումնական | Մեթոդական | Գիտական | Հետազոտական | Այլ |
| Աթենքի պետական համալսարան, փիլիսոփայության բաժանմունք (Հունաստան) | | | √ | √ | |
| ԱՄՆ-ի Նյու Հեվն նահանգի Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարան, փիլիսոփայության բաժանմունք (ԱՄՆ) | | | √ | √ | |
| Ամստերդամի պետական համալսարան, փիլիսոփայության բաժանմունք(Հոլանդիա) | | | √ | √ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բուխարեստի պոլիտեխնիկական համալսարան, փիլիսոփայության բաժանմունք( Ռումինիա) | | | √ | √ | |
| Ինսբրուքիասարան, փիլիսոփայության բաժանմունք( Ավստրիա) | | | √ | √ | |
| Բելառուսի պետական համալսարան, փիլիսոփայության բաժանմունք( Բելառուս) | | | √ | √ | |
| Իոաննինայի համալսարան, փիլիսոփայության բաժանմունք (Հունաստան) | | | √ | | |
| Լայբցիգի պետական համալսարան, Փիլիսոփայության ինստիտուտ (Գերմանիա) | | | √ | √ | |
| Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան, փիլիսոփայության ֆակուլտետ | | | √ | √ | |
| Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարան, փիլիսոփայության և սոցիալական | | | √ | √ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| գիտություններ ի ամբիոն(ՌԴ) | | | | | |
| Չինաստանի Հարավ-Արևմտյան համալսարան, Սոցիալական գիտություննե րի ֆակուլտետի փիլիսոփայութ յան ամբիոն(Չինաստան) | | √ | √ | √ | |
| Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ, փիլիսոփայութ յան բաժանմունք (Հունգարիա) | | √ | √ | √ | |
| ՌԴ ԳԱ Փիլիսոփայութ յան ինստիտուտ | | | √ | √ | |
| Տուրկուի պետական համալսարա, փիլիսոփայութ յան ինստիտուտ (Ֆինլանդիա) | | | √ | √ | |
| Պ.Ֆ. Լեսգաֆի անվան Ֆիզիկական կուլտուրայի սպորտի և առողջության ազգային պետական համալսարան, Սոցիալական և հումանիտար գիտություննե րի ամբիոն (ՌԴ) | | √ | √ | √ | |
| Սանկտ Պետերբուրգի պետական | | | √ | | √ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| համալսարան ի "Փիլիսոփայություն" մասնագիտական խորհրդ (ՌԴ) | | | | | |
| Վ. Յա. Կիկոտի անվան Ռուսաստանի ներքին գործերի նախարարության Մոսկվայի համալսարան, Պետության և իրավունքի տեսության ամբիոն (ՌԴ) | | | √ | √ | √ |
| Մոսկվայի մենեջմենթի պետական համալսարան (ՌԴ) | | | √ | √ | √ |
| Աթենքի կրթության և հետազոտության ինստիտուտ (Յունաստան) | | | √ | √ | √ |
| Աթենքի գիտությունների ակադեմիա (Յունաստան) | | | √ | √ | √ |

| Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն | | | | |
|---|---|---|---|---|
| Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոս | | | | |
| Օհանյան Քաջիկ Մարտիրոսի | պրոֆեսոր | Պ.Ֆ. Լեսգաֆտի անվան Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի եւ առողջության ազգային պետական համալսարան (ՌԴ,Սանկտ-Պետերբուրգ) | 2022թ. հունվար-դեկտեմբեր | Համավարակով պայմանավորված առցանց եղանակով իրականացվել են «Գիտական հետազոտության մեթոդաբանություն», «Գիտության փիլիսոփայություն,մեթոդաբանություն և էթիկա» |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | դասընթացները՝ բակալավրիատի ուսանողների, ասպիրանտների և հայցորդների համար: |

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները: |
|---|
| Քանի որ Ամբիոնը չի իրականացնում դպրոցներում ուսանողների պրակտիկային առնչվող գործունեություն, ուստի ինչպես և նախորդ ուսումնական տարիների ընթացքում, այնպես էլ հաշվետու տարում հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ Ամբիոնի ՊԴԱ-ի կատարած աշխատանքը ի մեծի մասամբ սահմանափակվել է անձնական կապերի և ծանոթությունների շրջանակներում ծավալած գործունեությամբ, ինչը առանձին դեպքերում բավականին արդյունավետ արդյունքներ է գրանցել: |

| Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ | | | |
|---|---|---|---|
| Աշխ-ի տեսակը | Համակարգող Ա.Ա.Հ. | Միջոցառման անվանումը | Ժամկետը |
| Ուսումնական | Հովհաննես Հովհաննիսյան | Երևանի պետական համալսարանին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզմատ դպրոց, վարպետաց դաս | 2020-ից առ այսօր |
| Մեթոդական | | Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135 միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի նախագահ | 2020-ից առ այսօր |
| Դաստիարակչական | | | |

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

| Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը: |
|---|
| Ուսումնական գործընթացների որակը ապահովելու և բարելավելու նպատակով ամբիոնում իրականացվում է հետևողական և համակարգված քաղաքականություն: Մասնավորապես՝<br>1. Փոխադարձ դասալսումների գրաֆիկի կազմում և իրականացում:<br>2. Աշխատաշուկայում ՀՊՄՀ շրջանավարտների զբաղվածության պատկերի ուսումնասիրություն և վերհանում սոցիոլոգիական հետազոտության իրականացման եղանակով, ինչի արդյունքները հրատարակվում և պարբերաբար քննարկվում են ֆակուլտետների դեկանների հետ: Հարցաշարերում տեղ են գտել կրթության որակին վերաբերող բավականաչափ հարցեր, որոնք ամբողջությամբ համապատասխանեցվել են առաջարկվող պահանջներին:<br>3. Ամբիոնի կողմից բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտություններում իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերի, ուսումնամեթոդական փաթեթների վերանայում՝ ըստ 2022 թ. ՀՊՄՀ-ում իրականացված վերապատրաստումների արդյունքների և դրանցում առաջադրված նոր պահանջների: Բավական արդյունավետ կազմակերպվել և հետրոնողականորեն կատարվել են բոլոր առաջարկվող փոփոխությունները: |

4. (1) կետին համապատասխան՝ քննական և միջանկյալ ստուգումների հարցաշարերի, թեստերի բանկի վերակազմում ըստ պահանջի
5. Ամբիոնի համապատասխան նիստում մանրամասն քննարկվել ու վերլուծություն է կատարվել: քննաշրջանի և լուծարքի շրջանի արդյունքների վերաբերյալ:
6. Որակի պատասխանատուի և ամբիոնի մասնագետի կողմից Google Classroom հարթակում իրականացվող գնահատման էլեկտրոնային համակարգի գործառնության հետևում: Դրան զուգահեռ ամենամսյա հաշվետվության միջոցով տեղեկությունների տրամադրում էլեկտրոնային մատյաններում ըստ պահանջի ներկա – բացականների կատարման մասին, ինչպես նաև բակալավրիատի և մագիստրատուրայի առցանց դասընթացների անցկացման կամ առկա փոփոխության մասին:

Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ամբիոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության մեջ ուսանողների, ներգրավվածությունը հիմնականում իրականացվում է 2017 թ. Ամբիոնին կից գործող «Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն» գիտական խմբակի շրջանակներում: Խմբակի կազմում ընդգրկված են Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի «Հասարակագիտություն» մասնագիտության բակալավրիատի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսի ուսանողները: Պարբերաբար իրականացվում են սեմինար-քննարկումներ, ուսանողները հանդես են գալիս զեկույցներով:

Ինչպես և նախորդ ուս. տարում հաշվետու տարում ևս արտաքին շահակիցները Ամբիոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության մեջ ընդգրկված են այնքանով, որքանով Ամբիոնում աշխատում են համատեղող դասախոսներ (Քաջիկ Օհանյան, Հովհաննես Հովհաննիսյան, Սուսաննա Դավթյան (2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակ), Արուսյակ Ղարիբյան (2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակ), Դավիթ Մոսինյան) և այնքանով, որքանով, որ Ամբիոնի մի շարք դասախոսներ աշխատում են նաև այլ համալսարաններում (Երևանի պետական համալսարան, Երևանի Մ.Հերացու անվան բժշկական համալսարան, Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան, Հյուսիսային համալսարան, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա և այլն):

| Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում | | |
|---|---|---|
| Միջոցառման անվանումը | Պատասխանատու | Արդյունքահենություն |
| Google Classroom հարթակում դասախոսների աշխատանքների մշտադիտարկում և նկատված բացթողումների շուրջ առաջարկությունների և դիտողությունների ներկայացում և քննարկում Ամբիոնի նիստերում | Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյան<br><br>Ամբիոնի որակի պատասխանատու Նելլի Պետրոսյան<br><br>Ամբիոնի Google Classroom-ի պատասախանատու Սաթենիկ Կուզանյան | Առկա թերությունների եւ բացթողումների վերհանում, դրանց շտկման մեխանիզմների և գործողությունների մշակում և կիրառում:<br><br>Ամբիոնի որակի պատասխանատուի և Google Classroom-ի պատասախանատու բացահայտած բացթողումները (բացակայող հարցաշարեր, թեմատիկ տրոհման բացակայություն, ներկա բացակաների ամրագրման բացթողում, կուրսի պրակտիկայում գտնվելու մասին համապատասխան հայտարարության ամրագրում) դոցենտներ Սուսաննա Դավթյանի, Դավիթ |

| | | |
|---|---|---|
| | | Մոսինյանի, Հովհաննես Հովհաննիսյանի և պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանի Google Classroom-ի դասընթացների էջերում ժամանակին շտկվել են, տեղադրվել են բացակայող նյութերը, հարցաշարերը և թեմատիկ տրոհումը: |
| Վերանայվել են ամբիոնում դասավանդվող 2022-2023 ուս. տարվա առաջին կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները հաշվի առնելով ՊԴԱ կազմի համար ՄԿԾ-ների, առարկայական նկարագրերի որակի բարձրացմանն ուղված մանկավարժամեթոդական վերապատրաստման դասընթացների ժամանակ առաջադրված նոր պահանջները: | Ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյան<br><br>Ամբիոնի որակի պատասխանատու Նելլի Պետրոսյան<br><br>Դոցենտ Անդրանիկ Ստեփանյան<br><br>Ամբիոնի դասախոսներ | Վերանայվել և վերամշակվել են 2022-2023 ուս. տարվա առաջին կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, ամրագրվել են անհրաժեշտ փոփոխությունները և թարմացումները՝ հաշվի առնելով նոր ձևաչափը և նոր պահանջները: |

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| Գիտահետազոտական աշխատանքի իրականացում և կազմակերպում | |
| Միջազգային առաջատար գիտաչափական շտեմարաններում ներառված WISDOM գիտական հանդեսի հրատարակություն | |
| | |
| | |
| | |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |

| | |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |